Փետրվար ամսվա մաթեմատիկայի ֆլեշմոբի 2-րդ մակարդակի խնդիրներ

1. Երեք ընկերներ միասին 9510 դրամ ստացան: Եթե առաջինը 410 դրամով պակաս ստանար, երկրորդը՝ 250-ով ավելի, իսկ երրորդը՝ 680-ով պակաս, բոլորը հավասար վարձատրված կլինեին: Որքա՞ն գումար ստացավ առաջին ընկերը:

Պատ.՝ 3300դր.

2. Հայրը հինգ որդիներին հավասար քանակությամբ ընկույզ տվեց: Որդիներից 3-ը 5-ական ընկույզ կերան և նկատեցին, որ իրենց այնքան էր մնացել, որքան մյուս երկուսին: Հայրը քանի՞ ընկույզ էր բաժանել:
   Պատ.՝ 75
3. Այն ամենափոքր քառանիշ թիվը գտե՛ք, որը բոլոր (բացի 1 թվից) միանիշ թվերի բաժանելիս 1 մնացորդ է ստացվում:
   Պատ.՝ 2521
4. 523-ին աջից եռանիշ թիվ կցագրեցի, և ստացված թիվն առանց մնացորդի 7-ի, 8-ի, 9-ի բաժանվեց: Ո՞րն է այդ պայմանին բավարարող ամենափոքր եռանիշ թիվը:
   Պատ.՝ 152
5. Կարենն ունի կարմիր ու կապույտ խաղաքարեր: Կարմիր խաղաքարերի վրա կենտ թվեր են գրված, իսկ կապույտների վրա՝ զույգ: Ի՞նչ գույն կունենա այն խաղաքարը, որի վրայի թիվը հավասար է կենտ և զույգ թվերի գումարին:

   Պատ. Կարմիր գույն, քանի որ կենտ և զույգ թվերի գումարը միշտ կենտ է:

6.Մի քանի տղաներ ու աղջիկներ թղթի թափոն հավաքեցին, ըստ որում, ամեն տղա 25 կգ հավաքեց, իսկ ամեն աղջիկ՝ 15 կգ: Ընդամենը 175 կգ հավաքեցին:Քանի՞ տղա էին հավաքում:
Պատ.՝ 4 կամ 1

7. Քանի՞ ութանիշ թվեր կան, որոնց թվանշանների գումարը 2 է:
Պատ.՝ 8

9. 240 ընկույզը 2 կույտի բաժանեցին այնպես, որ դրանցից առաջինում այնքան հնգյակ եղավ, որքան երկրորդում՝ տասնյակ: Որքա՞ն ընկույզ եղավ առաջինում:
Պատ.՝ 80

10. Տեղաշարժիր մեկ փայտիկ այնպես, որ ստանաս ճիշտ հավասարություն.



Պատ.՝ X-II=VIII, V+II=VII